

**ԱՄՆ-Ի ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՌՈԲԵՐՏ ՔՈԶԱՐՅԱՆԻ՝ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ
ԿԱՏԱՐԱԾ ԱՅՅԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՌՈՊԵՐԹ ՔՈԶԱՐԵԱՆ ԱՅՅԵԼԵՑ
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ**

Ամերիկայի Հայոց Արեւելեան Թեմի Առաջնորդարանի համար պատմական օր մը եղաւ Հինգշաբթի Սեպտեմբեր 24-ի օրը. երբ Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Նորին Վսեմութիւն Ռոպերթ Քոչարեան այցելեց Ս. Վարդան Մայր Տաճար եւ Առաջնորդարանի դահլիճին մէջ կազմակերպուած ընդունելութեան մը ընթացքին համդիպում ունեցաւ հրաւիրեալ ազգայիններու հետ:

Յետ միջօրէի ժամը 2.00-ին, ընկերակցութեամբ Հայաստանի Հանրապետութեան Արտաքին Գործոց Նախարար Տիար Վարդան Օսկանեանի, Հայաստանի Հանրապետութեան Ուաշինկթընի Դեսպան Տիար Ռուրէն Շուկարեանի եւ ՄԱԿ-ի մօտ Հայաստանի Հանրապետութեան լիազօր դեսպան Տիար Մովսէս Արէլեանի, Տիար Նախագահը ժամանեց Առաջնորդարանի համալիրը:

Ս. Վարդան Մայր Տաճարի մուտքին Նորին Վսեմութիւնը դիմաւորեցին Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արքեպս. Պաքսամեան եւ կարգ մը եկեղեցական Հայրեր:

Առաջնորդ Սրբազան Հայրը Ս. Վարդան Մայր Տաճարի մասին Հայաստանի Նախագահին տուաւ անհրաժեշտ բացատրութիւններ: Տիար Նախագահը գնահատանքով արտայայտուելով Մայր Տաճարի նարտարապետական կառոյցի մասին, ըսաւ. «Ս. Վարդան Մայր Տաճարը պահելով համդերձ ճարտարապետական աւանդական ոճը՝ ունի արդիական երանգ. նոր կառուցուելիք եկեղեցիներուն օրինակ պէտք է ծառայէ այս Տաճարը»:

Այա շֆախումբը ուղղուեցաւ Առաջնորդարանի դահլիճը, ուր հոծ բխով հրաւիրեալներ կը սպասէին՝ համդիպելու Մայր Հայրեցեալի Նախագահին: Ներկա էր նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջին, որ նախօրոք օրը՝ Զորեմշաբթի Սեպտեմբերի 24-ի յետ միջօրէին ժամանած էր Նիւ Եորք, Գերշ. Տ. Օշական Եպս. Զուլպեան, Գերշ. Տ. Վիգէն Եպս. Այգազեան եւ Գերապայծառ Յովհաննէս Եպս. Դերձակեան:

Հրաւիրեալներու երկարատեւ ծափահարութեան ընդմէջէն Տիար

Նախագահն ու իր շխախույժը մուտք գործեցին Առաջնորդարանի դահլիճ։ Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան հետեւեալ ուղերձը արտասանեց.

«Վսեմաշուք Տիար Նախագահ,

Որպէս Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Ձեր այս անդրանիկ այցելութեան ուրախ առիթով բարի գալուստ մաղթենք Ձեզի այս հիւրընկալ ասփերը։

Վեհափառ Տէր,

Կ'ըջունենք զՁեզ եւ մեծարգոյ Տիար Նախագահը՝ մէկ դարու փառաւոր պատմութիւն ունեցող մեր թեմական վիճակին անունով։ Դուք՝ Ձեզի հետ կը բերէք Հայաստանի արեւահամ բոյրը, որուն այնքան կարօտ է մեր թեմի հայրենաբաղձ ժողովուրդը։ Ուրախութեամբ կը տեղեկացնեմ, որ անցեալ Կիրակի օր իսկ՝ Սուրբ Վարդան Մայր Տանարին եւ մեր թեմի 62 ծխական եկեղեցիներուն մէջ, եկեղեցական արարողութեան ընթացքին, կատարուեցաւ Հայաստանի Հանրապետութեան համար մասնաւոր մաղթանք՝ անկախութեան տարեդարձին առիթով։ Այդ օրը հազարաւոր հայորդիներ մեր բոլոր եկեղեցիներուն մէջ աղօթեցին Հայաստանի Հանրապետութեան, հայոց զօրքերուն եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ անասանութեան եւ անդորրութեան համար, ինչպէս նաեւ մաղթեցին, որ Տէր Աստուած երկար կեանք եւ առաւել իմաստութիւն պարգեւէ Հայաստանի Հանրապետութեան Նախագահին, Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ հայրենի կառավարութեան։

Հայոց պետականութիւնը եւ Եկեղեցին մէկ ամբողջականութեան մը երկու կատարներն են՝ նման երկգագաթ Մասիս սարին։ Հայ պետականութիւնը աւանդաբար պաշտպանը հանդիսացած է մեր ազգային Եկեղեցւոյ, եւ Եկեղեցին ալ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան մականին ներքեւ՝ հաստատուն նեցուկը պետութեան։

Մեզի համար բացառիկ եւ հպարտացուցիչ պատիւ մըն է այսօր՝ այս ազգային տունին մէջ ընդունիլ Հայ ժողովուրդի քաղաքական եւ հոգեւոր պետերը միասնաբար։ Ազատ ու անկախ Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Ռոպերթ Քոչարեանը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջինը, որ կու գայ ապաքինած իր հիւանդութենէն՝ զօրավիգ կանգնելու մեր Նախագահին։

Մենք կը փոխանցենք Ձեզի՝ Տիար Նախագահ եւ Վեհափառ Տէր, մեր ժողովուրդին սէրը, յարգանքը եւ վստահութիւնը Ձեր պատուական անձերուն հանդէպ։ Ժողովուրդի մօտ կայ այն հաստատ համոզումը, որ հայութեան քաղաքական եւ հոգեւոր բարօրութեան համար է, որ Դուք կը գործէք անդուլ կերպով։

Թարգարծան Տիար Նախագահ,

Ձերդ Վսեմութեան վստահաբար ծանօթ է կարեւորութիւնը Սուրբ

Վարդան Մայր Տաճարին եւ Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդարանին յաշւ միջազգային շրջանակներու եւ հայ գաղութին ընդհանրապէս:

Առաջնորդարանի համալիրը Նիւ Եորք քաղաքի սրտին մէջ հայկական ներկայութեան խորհրդանշէն է: Օտարներ մեզ կը ճանչնան Սուրբ Վարդան Մայր Տաճարի հայեցի ճարտարապետական կառոյցով: Իսկ համալիրը ինքնին ազգային տունն է ամերիկահայութեան եւ հանդիսացած է կեդրոնը ոչ միայն գաղութի հոգեւոր կեանքին, այլ մանաւանդ ազգային շարժումներուն: Հոս ծրագրուած են Հայաստանի եւ Ղարաբաղի ի նպաստ բազմազան հանդիսութիւններ, հանդիպումներ եւ նոյնիսկ հսկայական ցոյցեր: Սուրբ Վարդան Մայր Տաճարի սրբազան գմբէթին ներքեւ հոգեւոյս Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Կիլիկիոյ Գարեգին Բ Կաթողիկոսի հովանաւորութեամբ ամբողջ արեւմտեան կիսագունդի հայութեան ներկայացուցչութիւնը հանդէս եկաւ օգնութեան ձեռք երկարելու 1988-ի երկրաշարժի աղետներուն: Այդ առիթով մեր թեմը դարձեալ առաջինը հանդիսացաւ միջոցներ ձեռք առնելու եւ օգնութիւն փութացնելու՝ Հայաստանի Օգնութեան Ֆոնտի կազմութեամբ: Ձեզի քաջածանօթ է ՀՕՖ-ի գործունէութիւնը այսօր Մայր Հայրենիքէն ներս:

Մեր Առաջնորդարանը առաջին հայկական հաստատութիւնը հանդիսացաւ, Հայրենիքէն դուրս, որ սիրայօժար կերպով տեղ տրամադրեց Հայաստանի Հանրապետութեան Միացեալ Ազգերու Կազմակերպութեան մօտ ներկայացուցչութեան:

Ձերդ Վսեմութեան, որպէս Հայաստանի Հանրապետութեան Նախագահ, այս անդրանիկ այցելութիւնը Միացեալ Նահանգներ, Առաջնորդարան եւ Մայր Տաճարի հետեւողութիւնը կը հանդիսանայ արդէն իսկ հաստատուած աւանդութեան մը, եւ մեծ խանդավառութիւն կը ստեղծէ մեր գաղութէն ներս՝ ժողովրդական լայն շրջանակներու մէջ: Ամերիկայի արեւելեան ափերու Հայաստանեայց Եկեղեցւոյ կեդրոնը կը գտնուի այս յարկին տակ: Բարի եկած էք, մեծարգոյ Տիար Նախագահ եւ Վեհափառ Տէր, հազար քարի՝ Ձեր այս հարազատ տունը»:

Իր խօսքի աւարտին՝ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան Տիար Նախագահին յանձնեց Հարիւրամեակի Ոսկեայ Շէնքանը: Ապա, քանի մը խօսքով արտայայտուեցաւ Զօրավար Արամ Գարամանուկեանի պատերազմական շնորհներուն եւ ազգային ազնիւ նկարագիրին մասին, եւ Տիար Նախագահին ներկայացուց հանգուցեալ Զօրավար Գարամանուկեանի այրին՝ Տիկին Յասմիկ Գարամանուկեանը, որ Հայաստանի Նախագահին նուիրեց իր ամուսնոյն սուրը՝ մաղթելով, որ Հայաստանի ղեկավարներն ու Հայ Ժողովուրդը միշտ անպարտելի մնան:

Նորին Վսեմութիւնը սուրը ստանալէ ետք ժպիտով մը ըսաւ. «Ձեմ գիտեք, թէ ինչո՞ւ ամէն մարդ ինծի գէնք կը նուիրէ...»: Ապա, ի մէջ այլոց ըսաւ. «Ինծի համար անսպասելի էր այս սուրի նուիրումը, եւ պէտք է ըսեմ, որ այս սուրը ինծի համար մեծ արժէք ունի: Այս սուրով եւ նման այլ

սուրբերով մենք անպայման կը պահպանենք մեր անկախութիւնը:...Մենք բոլորս միասին՝ Հայաստան, արտասահման եւ Արցախ պարտաւոր ինք այդ անկախութիւնը պահել:... Մեր ճկեղեցին միշտ եղել է պետութեան հետ միասին, եւ այն աղօթքները, որոնք Վեհափառ Տէրը կ'արտասանէ, այն աղօթքները, որոնք այսպիսի հոգեւոր կեդրոններու, եկեղեցիներու մէջ կ'արտասանուին՝ ուղղուած կ'ըլլան մեր պետութեան բարօրութեան համար»: Ապա խօսքը շարունակելով, ըսաւ, որ շատ լսած էր Առաջնորդարանի այս համալիրին մասին եւ առաջին անգամն էր, որ այնտեղ կը գտնուէր: Իր ուրախութիւնը յայտնեց այս հանդիպումին առթիւ, եւ խօսքը մասնաւորելով արտասահմանի հայութեան մասին, ըսաւ. «Մենք ձեզմով ուժեղ ենք, եւ դուք մեզմով»:

Հայաստանի «օպսիտ» ֆարէն պատրաստուած յուշանուէրը Առաջնորդ Սրբազան Հօր յանձնած ժամանակ ըսաւ. «Հայաստանը մաք չունի, բայց մաքէն աւելի հարուստ է մեր ժողովուրդը իր Հայրենիքով, իր հարուստ եւ դարաւոր պատմութիւնով, իր մշակոյթով եւ իր ճկեղեցիով»:

Տիար Նախագահի խօսքը ընդունուեցաւ բուռն ծափահարութեամբ:

Առաջնորդ Սրբազան Հայրը առանձնապէս Տիար Նախագահին ներկայացուց բոլոր հրաւիրեալները, որոնք շնորհակալութիւն յայտնեցին այս այցելութեան համար եւ փոխանցեցին իրենց սրտաբուխ քարեմաղթութիւնները: Ապա տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

Նախագահ Ռոպերթ Քոչարեան Նիւ Եորք ժամանած էր ելոյթ ունենալու համար Միացեալ Ազգերուն կազմակերպութեան մատաշերտին:

ԴԻԻԱՆ ՍՌԱԶՆՈՐԴԱՐԱՆԻ

Սեպտեմբեր 25, 1998

Նիւ Եորք, Ն. Ե.